ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ժիրայր Տիտիզյան
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք.Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն
2023թ. մայիսի 23-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային բանկ, PEMPAL ծրագրի քարտուղարություն

4. Գործուղման նպատակը՝

PEMPAL ծրագրի գանձապետական միավորման տարեկան լիագումար նիստին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները՝

- Գանձապետարանի գործառույթների վերաբերյալ 2022 թվականին կատարված հարցումների արդյունքների քննարկում
- Բյուջեի կատարման տարբեր մոդելների (մասնավորապես՝ ֆրանսիական և ավստրալիական) վերլուծություն
- Գանձապետարանի կողմից իրականացվող նախնական հսկողության և ռիսկերի կառավարման տարբեր մոդելների վերլուծություն
- Պետական կառավարման ոլորտում թվային տեխնոլոգիաների կիրառման նոր միտումները
- Մասնակից երկրների գանձապետարաններում վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված փոփոխությունների քննարկում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին մասնակցում էին PEMPAL ծրագրի 17 երկրների և PEMNA ծրագրի 5 երկրների, ինչպես նաև Համաշխարհային բանկի ընդհանուր թվով՝ 88 ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում քննարկված հարցերի շրջանակը հիմնականում առնչվում էր պետական բյուջեի կատարման ընթացքում ծախսերի նկատմամբ հսկողության մեխանիզմների կիրառմանը:

Ելույթ ունեցավ Համաշխարհային բանկի փորձագետ Մարկ Սիլինսը, ինչպես նաև ելույթներով հանդես եկան Վրաստանի, Ղազախստանի, Մոնղոլիայի, Ինդոնեզիայի, Ֆիլիպինների, Մոնտենեգրոյի, Ուզբեկստանի ներկայացուցիչները:

Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո հարցեր տալու հնարավորություն էր ընձեռվում և արդյունքում կազմակերպվում էին կարճ քննարկումներ:

Կազմակերպվել են նաև փոքր խմբերով քննարկումներ՝ յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից ներկայացնելով պետական բյուջեի ծախսերի նկատմամբ իրականացվող հսկողության մեխանիզմները:

Ներկայացրել եմ Հայաստանում կիրառվող՝ ծախսերի նկատմամբ հսկողության մեխանիզմները, գանձապետարանի տեղեկատվական համակարգի կապը պետական գնումների էլեկտրոնային համակարգի և պետական եկամուտների կոմիտի Հարկատու 3 տեղեկատվական համակարգի հետ, ինչպես նաև փոխգործելիության էլեկտրոնային այլ հարթակների առանձնահատկությունները: Ներկայացրել եմ նաև գանձապետարանի կողմից սպասարկվող կազմակերպությունների շրջանակը և դրանց առանձնահատկությունները:

7.**Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համեմատվել են համաժողովին մասնակից երկրների կողմից ներկայացված մեխանիզմները:

Ընդհանուրից առանձնացվել է Հայաստանի և Վրաստանի գանձապետական համակարգերի կառուցվածքը՝ առանց տեղական (տարածքային) ստորաբաժանումների: Առաջարկվել է մյուս երկրներին ուսումնասիրել նշված կառուցվածքին անցնելու հնարավորությունները:

PEMPAL ծրագրի՝ հաջորդ տարիների աշխատանքները կազմակերպելու, հիմանական միտումներն ու հետաքրքրությունները պարզելու նպատակով՝ մասնակիցներին ներկայացվել է հարցաշար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ լրացված հարցաշարի արդյունքներով ծրագրել հաջորդ տարվա քննարկումները:

Հարցաշարը լրացնելիս, հետագայում ուսումնասիրելու նպատակով, առանձնացվել են Համաժողովին մասնակից երկրների ստորև՝ հաջորդ կետում ներկայացվող փորձը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հետագայում ուսումնասիրելու նպատակով, առանձնացվել են Համաժողովին մասնակից երկրների փորձը.

- երկարաժամկետ (մեկ տարուց ավելի տևողությամբ) պայմանագրերի հաշվառման, ինչպես նաև եռամյա բյուջեի կիրառման Ղազախստանի փորձը
- բյուջեների ծախսերի համար 'կանաչ գոտու' կիրառման Վրաստանի փորձը,
- կանխիկ հոսքերի և գանձապետական գործարքների ռիսկերի կառավարման ֆրանսիական մոդելը,
- արտարժույթով բացված գանձապետական միասնական հաշվի վարման Ուզբեկստանի փորձը,

- ԿՖԿՏՀ ներդրմանն ուղղված տարբեր երկրների փորձը:

Recoverable Signature

X

ԺԻՐԱՅՐ ՏԻՏԻՉՅԱՆ

9. Ստորագրությունը, ամսաթիվ՝

Signed by: TITIZYAN ZHIRAYR 1111700087

30.05.2023թ.